

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ ՈԱՖԻԿԻ

**ՖՐԱՆՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1939
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Է. 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Գ. Ե. Կիրակոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Ա. Գ. Ավագյան

պատմական գիտությունների
թեկնածու Ա. Ս. Գասպարյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011թ. նոյեմբերի 24-ին, ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՅ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղդամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2011թ. հոկտեմբերի 22-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար

պ.գ.թ. Ռ. Ղազարյան

1. Թեմայի արդիականությունը

Մեր ծավորարևելյան տարածաշրջանը այսօր էլ հանդիսանում է բազմաշերտ հակասությունների դաշտ, որտեղ խաչվում են միջազգային հարաբերություններում հիմնական դերակատարներ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եվրոմիության և այլոց շահերը: Այս համատեքստում ֆրանս-թուրքական 1920-1930-ական թթ. հարաբերությունների համակողմանի ուսումնասիրությունը ունի քաղաքական և գործնական կարևոր նշանակություն, քանի որ Մեր ծավոր Արևելքում և մասնավորապես Թուրքիայում ժամանակակից բազմաթիվ միտումների ու իրադարձությունների հիմքերը խորանում են ընդհուպ մինչև 20-րդ դարի 20-30-ական թվականները: Ֆրանս-թուրքական հարաբերությունների հիմնական ուղղությունների ամբողջական ուսումնասիրման անհրաժեշտությունը առավել ընդգծվում է մեկ այլ տեսանկյունից. քանզի այսօր էլ Թուրքիա-Եվրոմիություն բանակցային գործընթացի ենթատեքստում, Եվրոպական միության արտաքին քաղաքական գերակայությունների ձևավորման գործում Ֆրանսիան լուրջ դերակատարում ունի: Ակներև է, որ ֆրանսիական դիվանագիտությունը մեծ ակտիվություն է ցուցաբերում նաև նոր պետությունների Եվրոպական Միության անդամակցության հարցում, որտեղ հատկապես կարևոր է Թուրքիայի Եվրոպական Միությանը անդամագրվելու հարցը: Առավել ևս, որ Թուրքիայի անդամակցության հարցում Ֆրանսիայի մոտեցումները և այս հարցում ԵՄ-ում մոտեցումները տարբեր են:

Առաջին աշխարհամարտից հետո միջազգային հարաբերություններում լուրջ փոփոխություններ կատարվեցին, սկիզբ դրվեց ուժերի վերադասավորման և ազդեցության ոլորտների վերաբաժանման անզիջում պայքարի, որի ընթացքում մախևիկն դաշնակից պետությունները վերածվեցին մրցակիցների:

1920-1939 թթ. կարևոր մի փուլ էր թե՛ Ֆրանսիայի, թե՛ Թուրքիայի պատմության մեջ՝ Օսմանյան կայսրությունը պարտվել էր, իսկ Ֆրանսիան հաղթող պետություն էր: Իրադարձությունների զարգացման մասն ընթացքին զուգահեռ, 1919թ սկսված և զնալով վերելք ապրող քենալական շարժումը լուրջ մրցակցություն պետք է ցույց տար Ֆրանսիային: Այդ պայքարը ավելի տեսանելի բնույթ ստացավ, ինչպես 1921թ Անկարայի պայմանագրով, այնպես էլ 1922 - 1923թթ. Լոզանի համաժողովից հետո:

Թուրքիան իր աշխարհաքաղաքական, ռազմավարական դիրքի շնորհիվ մշտապես գտնվել է հզոր պետությունների հետաքրքրությունների ոլորտում: Այս հանգամանքն ավելի ակնառու դարձավ 1930-ական թթ., երբ միջազգային հարաբերություններում Թուրքիայի դերը զգալիորեն մեծացավ: Մի կողմից Ֆրանսիան և Անգլիան, մյուս կողմից էլ Գերմանիան և Իտալիան, դիմում էին դիվանագիտական ամենատարբեր միջոցների՝ ներդրումներ կատարելով կրթական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ինչպես նաև տնտեսական, ռազմական, տեխնիկական աջակցությամբ, անհրաժեշտության դեպքում միջամտելով Թուրքիայի ներքին գործերին, վերջինիս իրենց արտաքին քաղաքական շահերին ծառայեցնելու համար:

«Նոր» Թուրքիան իր արտաքին քաղաքական ուղեմիջոցների ձևավորման համար պարտական է Մուստաֆա Քեմալ Աթաթուրքին: 20-րդ դարի 20-30-ական թթ. Թուրքիան Մ. Քեմալի քաղաքականության շնորհիվ ոչ միայն կարողացավ վերականգնել տարածաշրջանում իր կարևորագույն

դերակատարի անունը և ամրապնդել իր երբեմնի հեղինակությունը, այլև սկսեց եվրոպայի քաղաքական կյանքին ներգրավվել՝ բազմաբնույթ պայմանագրեր ստորագրելով թե՛ հարևան, թե՛ եվրոպական տերությունների հետ:

Թուրքիայի կողմից 1930-ական թթ.. երկրորդ կեսին, միջազգային դիվանագիտության ասպարեզ «նետվեց» Ալեքսանդրետի սանջաքի հարցը, որը սկիզբ դրեց նոր հակամարտության: Ալեքսանդրետի շուրջ վեճի կարգավորումը դուրս գալով ֆրանս-թուրքական դիվանագիտական վերահսկողության շրջանակներից, ընդունեց միջազգային բնույթ: Այս ընթացքում եվրոպական խոշոր երկրները ջանում էին Ալեքսանդրետի խաղաքարտը ծառայեցնել իրենց քաղաքական նպատակներին: Ֆրանսիան՝ անտեսելով Սիրիայի շահերը, սիրիական Ալեքսանդրետի «վճարումով» ապահովեց Թուրքիայի ժամանակավոր մերձեցումը անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը:

Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ Ալեքսանդրետի սանջաքի խնդիրը հանդիսանում է ոչ միայն թուրք-սիրիական, այլև թուրք-արաբական բարեկամական հարաբերությունների հաստատման խոչընդոտներից մեկը, չնայած պաշտոնական Անկարան արաբական աշխարհում Թուրքիայի հեղինակությունը բարձրացնելու համար վարում է վերջիններիս սիրաշահելու քաղաքականություն: Այդուհանդերձ, չի բացառվում որ վերստին Ալեքսանդրետի սանջաքի հարցը կարող է դրվել միջազգային դիվանագիտության սեղանին:

Արդի քաղաքական իրադրությունում մեջ ևս Թուրքիան՝ իր աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքի շնորհիվ, ձեռք է բերել կարևոր նշանակություն: Թուրք դիվանագետները և աշխարհա-քաղաքագետները նշում են իրենց երկրի կարևորության ևս մի քանի գործոն՝ մասնավորապես նրա դերակատարությունը Սևծովյան տարածաշրջանում և Թուրքիայի նկրտումները՝ դառնալու Սևծովյան գերտերություն:

Թուրքիան այսօր փորձում է ընդլայնել իր հետաքրքրության շրջանակները նաև տարածաշրջանում՝ շրջանառության մեջ դնելով «գրո խնդիր» հարևանների հետ՝ գաղափարը՝ իրականում լուրջ հավակնություններ ներկայացնելով հատկապես Անդրկովկասի նկատմամբ:

Այս առումով 20-րդ դարի 20-30-ական թթ. ֆրանս-թուրքական հարաբերությունների տրամաբանությունը հասկանալու և տարածաշրջանային գործընթացների էությունը խորապես բացահայտելու հանգամանքը կարևոր նշանակություն ունի նաև մեկ այլ տեսանկյունից՝ Հայաստանի հանրապետության արտաքին քաղաքական օրակարգի կնճռոտ հիմնախնդիրներից մեկը Թուրքիայի հետ հարաբերությունների հստակեցման առումով:

Թեև վերջին շրջանում Հայաստանը և Թուրքիան դիվանագիտական հարաբերությունների հնարավոր օրակարգի վերաբերյալ որոշակի քայլեր ձեռնարկեցին /տարբեր մակարդակների և տարբեր ձևաչափերով հանդիպումներ/, այսուհանդերձ նորանկախ Հայաստանի Հանրապետության համար կարևոր նշանակությունը, որոնք կօժանդակեն երկրին՝ գտնելու իր ուրույն տեղը տարածաշրջանում, կառուցելու իրավական և բարեկեցիկ երկիր: Հայտնի է, որ թուրքական հանրապետությունը ցայսօր պետական մակարդակով ժխտում է Հայոց ցեղասպանությունը և թուրքերը

շարունակաբար կատարելագործում են ցեղասպանության ժխտման և պատմական իրողությունների նեոգափոխման համակարգը: Հաշվի առնելով մեր երկրի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում վերջին շրջանում Ֆրանսիայի որդեգրած հայանպաստ քաղաքականությունը, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ լինելու հանգամանքը, մեզ համար կարևոր նշանակություն ունի Ֆրանսիայի հետ բազմակողմ համագործակցությունը:

2. Ատենախոսության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է եղել համակողմանի հետազոտել ֆրանս-թուրքական հարաբերությունները 1920-1939 թթ., բացահայտել երկկողմ փոխհարաբերությունների հաստատման գլխավոր շարժառիթները, զարգացման փուլերը և հեռանկարները, ինչպես նաև վերլուծել հետպատերազմյան աշխարհի միջազգային զարգացումների անդրադարձը ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա: Ելնելով այդ նպատակներից ատենախոսության մեջ հետազոտվում են հետևյալ խնդիրները՝

- Ներկայացնել Ֆրանսիայի ռազմավարությունը Մերձավոր Արևելքում և Կիլիկիայում:

- Քննարկել Առաջին աշխարհամարտից հետո ֆրանս-թուրքական քաղաքական կապերի զարգացումը բազմաբնույթ առնչությունների տեսանկյունից:

- Լուսաբանել դիտարկվող ժամանակաշրջանում ֆրանս-թուրքական տնտեսական հարաբերությունների հիմնական ուղղությունները՝ բացահայտելով տնտեսության տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրները:

- Ցույց տալ Ֆրանսիայի որդեգրած զիջողականության քաղաքականության պատճառներն ու հետևանքները գերտերությունների շահերի բախման կիզակետում հայտնված Մերձավոր-արևելյան տարածաշրջանում:

- Հետազոտել Օսմանյան պարտքի հիմնախնդրի կարգավորման գործնաբար և հիշյալ խնդրում ֆրանսիական կողմի դիրքորոշումը:

- Ներկայացնել Սիրիայի մաս կազմող Ալեքսանդրետի սանջաքի հարցով շահագրգիռ տերությունների՝ Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Իտալիա, ԽՍՀՄ դիրքորոշումները, քանի որ վերջիններիս համար (ԽՍՀՄ-ի փոխարեն նրա ժառանգորդ Ռուսաստանը) այդ տարածաշրջանը ինչպես անցյալում, այնպես էլ այժմ բազմաշերտ հակասությունների պայթյալի դաշտ է:

- Վեր հանել հիշյալ խնդրի դերը մի կողմից Ֆրանսիայի և Անգլիայի, մյուս կողմից էլ Գերմանիայի և Իտալիայի ռազմավարական նպատակների ու խնդիրների համատեքստում:

- Վերլուծել Ազգերի լիգայում Ալեքսանդրետի սանջաքի խնդրի քննարկման ընթացքն ու արդյունքը և այդ փուլում Թուրքիայի քաղաքական հաշվարկները:

- Դիտարկել Երկրորդ աշխարհամարտի նախօրեին արևմտյան երկրների դիրքորոշումների տրամաբանությունը Թուրքիայի նկատմամբ:

- վերլուծության ենթարկել թուրքիայի դերի կարևորությունը տարածաշրջանում խաղաղության հաստատման և ուժերի հարաբերակցության դիտանկյունից:

3. Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության թեման մեր իրականության մեջ իր բովանդակությամբ և հարցադրումներով նախկինում լիարժեքորեն համակարգված ուսումնասիրության չի ենթարկվել, թեև հետազոտվել և հրապարակվել են հարցին վերաբերող գիտական աշխատություններ և հոդվածներ, որոնցում լուսաբանվել են թեմային առնչվող առանձին խնդիրներ:

Ներկա աշխատության մեջ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել ֆրանս-թուրքական հարաբերությունները նշյալ ժամանակաշրջանում, վեր հանել երկկողմ փոխհարաբերությունների ինչպես զարգացման, այնպես էլ վատթարացման պատճառա-հետևանքային կապերը՝ օգտվելով հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, անգլերեն լեզուներով հրատարակված բազմաբնույթ գրականությունից:

Աշխատանքի գիտական նորույթը այն է, որ վերլուծվել և պատմագիտորեն լուսաբանվել են ֆրանս-թուրքական հարաբերությունների ամբողջ համալիրը ժամանակագրական տարբեր փուլերում: Նորույթ են պարունակում ատենախոսության այն բաժինները, որտեղ խոսվում է ֆրանս-թուրքական դիվանագիտական պայքարի մասին Լոզանի համաժողովից հետո, հատկապես Ֆրանսիայի մանդատային տարածք Սիրիայի և Թուրքիայի սահմանների ճշգրտման ընթացքում թուրքական կողմի առաջ քաշած պահանջների և առաջարկությունների առնչությամբ: Նորույթ է նաև Օսմանյան պարտքի խնդիրն վերաբերող բաժինը: Գիշտ է՝ խնդրի շուրջ Լոզանի համաժողովում ընթացող բանակցություններին և թուրք-ֆրանսիական հակամարտությանը մասամբ անդրադարձ կատարվել է, սակայն այս հիմնահարցը հայրենական պատմագիտության մեջ ամբողջական ուսումնասիրության նյութ չի դարձել:

4. Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Մեր կողմից ուսումնասիրության համար ընտրված ժամանակաշրջանն ընդգրկում է 1920-1939թթ՝ հաշվի առնելով, որ Առաջին աշխարհամարտից հետո աշխարհում տեղի ունեցավ ռազմաքաղաքական և տնտեսական շահերի ու ազդեցության գոտիների վերաբաժանում: Այս հանգամանքն էլ նախկին դաշնակից պետությունների միջև հետպատերազմյան աշխարհում գերիշխող դիրքի հասնելու համար հակասությունների խորացման պատճառ դարձավ: Աշխատանքը ժամանակագրական առումով պայմանականորեն բաժանել ենք երեք փուլերի: Առաջինը՝ 1920-1923 թթ., որտեղ, նկատի է առնվել Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո իրադարձությունների զարգացումը օսմանյան ժառանգության շուրջ, մինչև 1923 թ. Լոզանի համաժողովի ավարտը, որտեղ թուրքական դիվանագիտությունը կարողացավ իրավաբանորեն ամրագրել իր համար չափազանց կարևոր ձեռքբերումներ: Երկրորդ փուլը՝ 1924-1935 թթ., երբ արդեն

Հանրապետական թուրքիան Ս. Քենալի գլխավորությամբ աստիճանաբար հաղթահարեց «Լոզանի ժառանգության» ծանր հետևանքները, շարունակեց ամրապնդել իր միջազգային դիրքերը և կարգավորեց հարաբերությունները ինչպես հարևան, այնպես էլ եվրոպական տերությունների հետ: Երրորդ շրջափուլը ընդգրկում է 1936-1939 թթ՝ դիվանագիտական և քաղաքական պայքարի այն փուլերը, որոնք առաջացան Ալեքսանդրեոսի սանջաքի խնդրի շուրջ՝ սկիզբ դնելով ֆրանս-թուրքական նոր հակամարտության:

Ատենախոսության մեջ առկա որոշ իրադարձություններ դուրս են գալիս ժամանակագրական շրջանակներից՝ պայմանավորված մի շարք հիմնախնդիրների ամբողջական ներկայացման անհրաժեշտությամբ:

5. Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կազմում են պատմա-համեմատական մոտեցումը և հիմնախնդիրների աղբյուրագիտական վերլուծությունը: Լայնորեն օգտագործվել են տարբեր տեսակետներ և խնդիրների լուծման նկատմամբ զանազան մոտեցումների համադրման մեթոդը՝ հենվելով սկզբնաղբյուրների և տարբեր լեզուներով հրատարակված մասնագիտական գրականության ու պարբերականների տվյալների վրա: Ժամանակի ընթացքում առաջ քաշված բազմաթիվ հարցադրումներ և կարծիքներ ներկայացվել են նորովի՝ քաղաքական վերլուծության համապատկերում:

6. Աշխատանքի կիրառական նշանակությունը

Ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները, ինչպես նաև փաստական նյութերը կարող են օգտագործվել թուրքիայի և Ֆրանսիայի նորագույն պատմության և միջազգային հարաբերությունների որոշ հարցերի ուսումնասիրության համար:

Նկատի ունենալով, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական տեսանկյունից խիստ կարևոր նշանակության ունի տարածաշրջանում հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև եվրոպական քաղաքականության սկզբունքների մշակումը, աշխատանքում տեղ գտած տարբեր գնահատականներն ու վերլուծությունները կարող են օգտակար լինել :

7. Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսությունը հաստատվել է ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում:

Աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում, ինչպես նաև երիտասարդ արևելագետների հանրապետական գիտաժողովում:

8. Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն

Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, անգլերեն լեզուներով հրատարակված տարաբնույթ գրականություն հիման վրա: Ուսումնասիրության մեջ կարևոր տեղ է հատկացվել Ֆրանսիայի և Թուրքիայի դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերին, պետական գործիչների ելույթներին ու հայտարարություններին:

Առանձնակի կարևորություն է տրվել սկզբնաղբյուրներին: Ուշագրավ տեղեկություններ է պարունակում ՀՀ Ազգային արխիվի 200 ֆոնդի 546 գործը, որտեղ ներկայացված են Կիլիկիայում Ֆրանսիայի վարչական և ռազմական ղեկավարության /մասնավորապես գնդապետ Բրեմոնի, գեներալ Գուրոյի, Դյուֆրոյի/, Ֆրանսիայի քաղաքական ղեկավարության և կիլիկիահայ հոգևոր առաջնորդների ու հայ գործիչների պաշտոնական նամակագրությունները¹: Այստեղ վեր է հանվում Ֆրանսիայի որդեգրած քաղաքականության և կիլիկիահայության համար դրա աղետալի հետևանքների մասին հետաքրքիր մանրամասներ:

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում պահվող արխիվային փաստաթղթերից ուշադրության արժանի է հատկապես թղթապանակ 240-ի 1-11-րդ վավերագրերը: Այս փաստաթղթերում ներառված են Ֆրանսիայի ղեկավար շրջանների և Կ. Պոլսի հայոց պատրիարքի ու Պողոս Նուբարի նամակագրությունները, ինչպես նաև սիրիական մամուլի որոշ հրապարակումները, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայում Ֆրանսիայի վարած քաղաքականության մասին²:

Ֆրանս-թուրքական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար արժեքավոր տեղեկություններ կան ժամանակի դեպքերի և իրադարձությունների ականատես ու մասնակից պետական-քաղաքական և դիվանագիտական գործիչներ՝ Լ. Ջորջի, Ու. Չերչիլի, Գ. Զիչերինի³, Մ. Քեմալի⁴, Իսմետ Իմյոնյուի⁵, Ալի Ֆուադ Ջեբետյի⁶, Գ. Պյոուի⁷ Ե. Բրեմոնի⁸, հուշագրություններում և աշխատություններում:

¹ ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 200, Արտգործնախարարության ֆոնդ, ցուցակ 1, գործ 546:

² Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ /Մատենադարան/:

Այլևայլ հեղինակների արխիվ, թղթ. 240, վավ. 11, «Սուրիական մամուլ», օրաթերթ, 07.11.1924. համար, 4, 7, 9, Հավելյ: Այլևայլ հեղինակների արխիվ, Գևորգ Պապոյան, թղթ. 240թ, վավ.1:

³ Чичерин Г., Статьи и речи по вопросам международной политики, Москва, 1961.

⁴ Кемаль М., Путь Новой Турции, том 1-3, Москва, 1929.

⁵ İmönü İ., Hatıralar, Ankara, 1985, 1987, kitap 1, 2.

⁶ Ali F., Milli mücadele hatıralar, İstanbul, 1953.

⁷ Gabriel P., Deux Anne'es au Levant, Paris, 1952.

⁸ Bremond E., La Cilicie en 1919-1920, Paris, 1921.

Մեծ Բրիտանիայի հայտնի պետական-քաղաքական գործիչներ Լ. Ջորջը⁹ և Ու. Չերչիլը¹⁰ իրենց աշխատություններում վերլուծում են Մերձավոր Արևելքում տիրող իրադրությունը, անգլո-ֆրանսիական հակամարտության պատճառներն ու հեռանկարները, ֆրանսիական դիվանագիտության քայլերը և հանգում այն եզրակացության, որ Մերձավոր Արևելքում, հատկապես Թուրքիայում, Անգլիայի մրցակիցը Ֆրանսիան է: Ուշագրավ է, որ բրիտանացի դիվանագետները մեղադրում են «Ֆրանսիայի կառավարությանը ճնշված ժողովուրդների ճակատագրով այլևս չհետաքրքրվելու համար», չնշելով որ նման վարքագիծը բնորոշ է նաև Մեծ Բրիտանիային:

Խորհրդային անվանի պետական գործիչ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը ևս իր «Չոզվածների ու ճառերի» ժողովածուում անդրադառնալով Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի, Անգլիայի և Թուրքիայի արտաքին քաղաքականության դրսևորումներին, հետաքրքիր դիտարկումներ է կատարել ժամանակի միջազգային հարաբերությունների վերաբերյալ: Քննադատական խոսք ուղղելով Ֆրանսիայի և Անգլիայի Նեղուցների պայմանակարգի հարցում վարած քաղաքականությանը, Չիչերինը նշում է, որ այստեղ համընկնում են Թուրքիայի և Խորհրդային Միության շահերը:

Փաստական հարուստ տվյալներով հատկապես աչքի են ընկնում Կիլիկիայում ֆրանսիական վերահսկողության ղեկավար գնդապետ Է. Բրենոնի «Կիլիկիան 1919-1920թթ» հուշերը: Սակայն Է. Բրենոնը հաճախ իրադարձությունները լուսաբանում է ֆրանսիական իշխանությունների շահերի պաշտպանության տեսանկյունից, պարբերաբար Ֆրանսիային վերագրելով «ազատագրական» և «հաշտարար» առաքելություն:

Չգալի տեղեկություններ է պարունակում թուրք քաղաքական և ռազմական հայտնի գործիչ Ալի Ֆուադ Ջեբեսոյի «Ազգային ազատագրական պայքարի հուշերում» գիրքը: Ուշագրավ են հատկապես Մուստաֆա Բենալի և ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի միջև տեղի ունեցած բանակցությունների նյութերը: Խոսելով Կիլիկիայում ծավալվող իրադարձությունների մասին, Ալի Ջեբեսոյը սակայն միտումնավոր կեղծում է փաստերը և պնդում, թե իբր «հայերը սրի են քաշում բնակչությանը, հրդեհում թուրքական գյուղերը»¹¹:

Մեր ուսումնասիրության ընթացքում շարունակ դիմել և քննադատաբար օգտվել ենք նաև Խորհրդային և սփյուռքահայ մամուլի հարուստ և բազմազան նյութերից:¹² 1920-1939թթ Կ. պոլսում, Փարիզում,

⁹ Джордж Л., Европейский хаос, Л-М., 1924г. Правда о мирных договорах, том 2, Москва, 1957.

¹⁰ Черчилль У., Мировой кризис, Москва, 1932.

¹¹ Ali F., Milli mücadele hatiralari, Istanbul, 1953.

¹² Ապագա, 05. 06. 1929, Փարիզ, Առաջ, 25 .06. 1929, Փարիզ, Առավոտ, 07. 06. 1920, 1922, Կ. պոլիս, Արագ, 01. 01.1937, Բուխարեստ, Արմադան, 29 .10 1938, Մտամբուլ, Բազմավեպ, օգոստոս, 1920, համար 8, Վենետիկ, Երկիր, 13.01.2006, Երևան, Երևան, 04. 06. 1926, Փարիզ, Չարքոնք, 02.09. 1964, Բեյրութ, ժամանակ, 05.09.2006, Երևան, Ժողովրդի ձայն, 13.02.1938, Բեյրութ, Լրաբեր, 10. 01. 1939, Նյու-Յորք, Խորհրդային Հայաստան, 11. 01. 1937, Երևան, Հայրենիք, 16.05.1936. Բոստոն, «Հայոց աշխարհ», 05.10. 2005, 2006, Երևան, Դակատամարտ, 08.01.1922, Կ պոլիս, Մշակ, 6.01.1921 Թիֆլիս:

Բեյրութում և այլուր հրապարակվող հայ պարբերականներում փաստական զգալի նյութ է պարունակվում Թուրքիայի ներքաղաքական կյանքի, Կիլիկիայում Ֆրանսիայի վարած քաղաքականության, Լոնդոնի և Լոզանի համաժողովներում Անկարայի պատվիրակության որդեգրած քաղաքական կեցվածքի, հետլուգանյան շրջանի Թուրքիայի Յանրասպետության արտաքին քաղաքական ուղղությունների, Ալեքսանդրետի սանջաքի հիմնախնդրի կարգավորման գործընթացի մանրամասների և այլ հարցերի վերաբերյալ: Մոսկվայում հրատարակվող խորհրդային¹³, Փարիզի և Կ. պոլսի հայկական պարբերականները միաժամանակ ուշագրավ հոդվածներ են մեջբերում ֆրանսիական և թուրքական մամուլի հրապարակումներից, որն հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել ֆրանս-թուրքական հարաբերություններում առկա հակասությունների, երկու երկրների ղեկավար շրջաններում տիրող տրամադրությունների և հասարակության մեջ դրանց ունեցած արծագանքների մասին:

Ուսումնասիրվող թեմայի առանձին հիմնախնդիրներ հետազոտվել են նաև հայ պատմաբանների կողմից: Այս շարքում կարելի է առանձնացնել անվանի թուրքագետ Ռ. Սահակյանի «Ֆրանս-թուրքական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ.»¹⁴, աշխատությունը, որտեղ մանրամասն վերլուծության է ենթարկվում ֆրանս-թուրքական դիվանագիտական կապերի զարգացումը 1919թ-1921 թթ., քեմալական Թուրքիայի և Ֆրանսիայի վարած քաղաքականությունը Կիլիկիայում և դրա ողբերգական հետևանքները կիլիկիահայության համար: Հեղինակը Ֆրանսիայի արտաքին քաղաքականության փոփոխականությունը հաճախ դիտարկում է խորհրդային Ռուսաստանի հետ Անգլիայի և Ֆրանսիայի դրսևորած թշնամական վերաբերմունքի համապատկերում: Անդրադառնալով քեմալական շարժմանը Ռ. Սահակյանը ցույց է տալիս նրա իրական դեմքն ու բովանդակությունը:

Հաջորդ արժեքավոր ուսումնասիրությունը Ա. Բայրամյանի «Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939 թթ.»¹⁵ աշխատությունն է, որտեղ հեղինակը հիմնվելով կարևորագույն սկզբնաղբյուրների վրա, ապացուցում է, որ Ալեքսանդրետի սանջաքը սիրիական տարածք է, որը հանիրավի խլվեց Սիրիայից և բռնակցվեց Թուրքիային: Ա. Բայրամյանը հանգամանալից ձևով վերլուծում է այդ շրջանի միջազգային հարաբերությունները և հիմնախնդիրը դիտարկում է առավելապես այս համատեքստում: Հեղինակը Ալեքսանդրետի սանջաքի խնդրի «վերջնական» կարգավորման գործընթացում մեղադրելով հիմնական դերակատարներին՝ Թուրքիային, Ֆրանսիային և Անգլիային, գալիս է այն եզրահանգման, որ դա «Մյունխենյան գործարքի» նախադեպ է:

¹³ Известия, 17.01.1926 -1927,1936-1937, Москва. Правда,16.12.1936, Москва, 1938, 1939. Бюллетин. НКИ/Д. N 30. 05.09. 1920, Москва, с. 40, Международная жизнь, Москва, 1925, N 1,1926 N 1, 1927, N 10, 1929, N 1,1930, N 9-10, Новый Восток, N 3, 1923, Москва.

¹⁴ Սահակյան Ռ., ֆրանս-թուրքական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ, Երևան,1970:

¹⁵ Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939թթ, Երևան, 1998:

Մեր ուսումնասիրած թեմայի որոշ խնդիրներին մասամբ անդրադարձել են նաև Ն. Յովհաննիսյանը¹⁶, Յ. Սարգսյանը¹⁷ և Բաղդասարյանը¹⁸:

Ֆրանս-թուրքական հարաբերությունների համակողմանի լուսաբանման համար կարևոր աղբյուր են ծառայել ֆրանսիական պատմաբանների, լրագրողների, դիվանագետների ու ռազմական զործիչների ուսումնասիրությունները, որոնք մեր կողմից քննական վերլուծության են ենթարկվել, քանի որ նրանցից շատերը իրադարձությունները լուսաբանում են Ֆրանսիայի քաղաքական և ֆինանսա-տնտեսական շահերի տեսանկյունից:

Ֆրանսիացի հեղինակների աշխատությունների շարքում առանձնանում է պատմաբան Պոլ դյու Վեուի. «Կիլիկիայի տառապանքները»¹⁹ խորագրով ուսումնասիրությունը: Հեղինակը վերլուծելով Ֆրանսիայի կառավարող շրջանների քաղաքականությունը Կիլիկիայում և կիլիկիահայության նկատմամբ, բազմիցս իր քննադատական խոսքն է ուղղում Ֆրանսիայի ղեկավար շրջանների հասցեին: Դյու Վեուի «Ալեքսանդրետի աղետը (1934-1938 թթ.)» գիրքը պարունակում է չափազանց հարուստ փաստագրական նյութ սամջաքում ֆրանսիացիների վարած թուրքանպաստ քաղաքականության, նաև հակամարտության առաջացման ներքին դրդապատճառների, հրապարակված գաղտնի վավերագրերի մասին: Նույն հեղինակի հաջորդ աշխատությունը «Քրիստոնյաները վտանգի տակ Մուսա լեռան վրա», արժեքավոր է հատկապես նրանով, որ այնտեղ բերված են ականատեսի հավաստի վկայություններ ու փաստական տվյալներ, թուրքական զորքերի մուտքից հետո շրջանում բացահայտ «թուրքացման» քաղաքականության մասին: Հիմնախնդրի լուսաբանման համար արժեքավոր տվյալներ կան նաև Ս. Պայառեսի²⁰, Ժ. Պիշոնի²¹, Մ Պեռնոյի²² և ֆրանսիացի մի շարք այլ հեղինակների²³ աշխատություններում:

Սույն աշխատանքի առանձին հիմնախնդիրներ, այս կամ այն չափով իրենց դրսևորում են գտել նաև խորհրդային մի շարք հեղինակների աշխատություններում: Սակայն հարկ է նշել, որ որոշ հեղինակների

¹⁶ Արաբական երկրների պատմություն, Հ. 4, Երևան, Չանգակ-97, 2007, էջ 767:

¹⁷ Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., «Միրիան անկախության համար մղված պայքարում», 1917-1946, Երևան, 1975:

¹⁸ Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, 2001:

¹⁹ Paul du V., Le Passion de la Cilicie. 1919-1922, Paris, 1954, Le de'sastre d' Alexandrette, 1934-1938, Paris, 1938, Les che'tiens en Peril au Moussa-Dagh, Paris, 1939.

²⁰ Paillares M., Le Ke'malisme devant les Allies, Bosfore. Paris. 1922.

²¹ Pichon J., Le partage du Proche-Orient, Paris, 1938.

²² Pernot M., «La Question Turquie», Paris, 1923.

²³ Mandelstam A., La Socie'te' des Nations et les Puissances devant le proble'me arme'nien Paris. 1926. Materne M., Le massacre de Marache. /Fevrie 1920/, N 1, janvier, 1921. Paris, Histoire des Arme'niens, Toulouse, 1982, Andre' F., Histoire de la guerre froide. Paris, 1983. Claude P., La Syrie. Paris. 1977. Pech E., Les Allie's et la Turquie. Paris, 1925, Pernot M., «La Question Turquie», Paris, 1923. R.de Gontant B., et Re've'rent, /D'Angora a' Lausanne/, Les etapes d'une de'che'ance/, Paris, 1924.

գործերում առկա են միակողմանի ու թերի գնահատականներ, փաստերի և իրադարձությունների կանխակալ մեկնաբանություններ:

Ա. Միլլերը «Ուրվագծեր թուրքիայի նորագույն պատմության»²⁴ աշխատության մեջ մանրամասնում է ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ֆրանկլեն Բուլոնի և Մուստաֆա Քեմալի միջև ընթացող բանակցությունները, ինչպես նաև 1921թ պայմանագրի ստորագրումը: Չեղինակը հաճախ զովեստի է արժանացնում Մ. Քեմալին և քեմալական շարժումը, ներկայացնում է միայն այդ շարժման ազատագրական ուղղվածությունը, մինչդեռ քեմալական շարժանը բնորոշ է նաև զավթողական բնույթը: Նույն կերպ է վարվում նաև պրոֆ.Վ. Գուրկո-Կոյաժինը՝ գովերգելով քեմալական շարժումը²⁵:

Քննադատության չեն դիմանում նաև Ա. Մ. Շամսուտդինովի «Ազգային ազատագրական պայքարը թուրքիայում»²⁶ և Ն. Էֆենդիևայի «Թուրք ժողովրդի պայքարը ֆրանսիական զավթիչների դեմ Անատոլիայի հարավում /1919-1921թթ/»²⁷ աշխատությունները: Առաջին դեպքում Շամսուտդինովը լուսաբանելով իրադարձությունները Կիլիկիայում 1920-1921 թթ., լռության է մատնում Անկարայի կառավարող շրջանների ջարդարարական գործողությունները, իսկ երկրորդում Էֆենդիևան ավելի հեռու է գնում և պնդում թե իբր հայերն են զբաղված ջարդարարական գործողություններով: Դ. Ն. Ֆիլիպենկոն ևս «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները, թուրքիայում ազգային ազատագրական պատերազմի ժամանակաշրջանում 1918-1922 թթ.»²⁸ աշխատության մեջ ներկայացնելով թուրքիայում՝ Ֆրանսիայի առևտրա-տնտեսական շահերը, կրկին շրջանցում է քեմալականների ազգայնամոլ քաղաքականությունը:

Նույն ձևով են վարվում են Վ. Մ. Ալեքսեևը և Մ. Ա. Քերիմովը՝ գրելով, որ «Ալեքսանդրետի սանջաքը բազմազգ մի շրջան էր, որի ազգաբնակչությունը կազմված էր առավելապես արաբներից և թուրքերից»²⁹: Մինչդեռ Ալեքսանդրետի սանջաքի բնակչության զգալի մասը հայեր էին, ովքեր ակտիվ մասնակցություն ունեին սանջաքի ներքաղաքական կյանքին:

Աշխատանքը շարադրելիս օգտվել ենք նաև թուրքական աղբյուրներից, սակայն նկատի ունենալով, որ թուրք պատմաբանների գործերում իրադարձությունների և դեպքերի լուսաբանումը հեռու են գիտական անաչառությունից և հաճախ միտումնավոր խեղաթյուրվում է իրականությունը, հնարավորինս քննական մոտեցում է ցուցաբերվել, կանխակալ և ենթակայական մոտեցումներից զերծ մնալու համար:

Օսմանյան պարտքերի հիմնախնդրի կարգավորման գործընթացի, այս խնդրում շահագրգիռ պետությունների, հատկապես Ֆրանսիայի վարած

²⁴ Миллер А., Очерки новейшей истории Турции, М-Л., 1948г, Актуальные проблемы новой и новейшей истории Турции, Москва,1983.

²⁵ Гурко-Кряжин А., История революции в Турции, Москва, 1923.

²⁶ Шамсутдинов А., Национально-освободительная борьба в Турции 1918-1923, Москва,1966.

²⁷ Эфендиева З., Борьба турецкого народа против французских оккупантов на Юге Анатолии 1919-1921. Баку 1966.

²⁸ Филипенко Л., Турецко-французские отношения в период национально-освободительной войны в Турции 1918-1922, Киев,1964.

²⁹ Алексеев В., Керимов М., Внешняя политика Турции, Москва, 1961.

քաղաքականության, վերաբերյալ կարևոր մանրամասներ կան թուրք հեղինակ Ռ. Յենիայի «Օսմանյան պարտքերը» աշխատությունում³⁰:

Շահեկան տեղեկություններ են պարունակում «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» ժողովածուն³¹, Թևֆիկ Բյուքբիօղլուի «Աթաթուրքն Անատոլիայում (1919-1921,22 թթ.)»³², Ա. Թուրանի³³, Ք. Օզթյուրքի,³⁴ Ա. Էսմերի³⁵, Շ. Այդենիրի³⁶, Ջ Այջայուրեքի³⁷ և այլոց աշխատությունները³⁸:

Թուրք-ֆրանսիական հարաբերությունները լուսաբանելիս օգտագործել ենք նաև անգլիական աղբյուրներ, որոնցից կարևորել ենք հատկապես «Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության փաստաթղթեր (1919-1939 թթ.)»³⁹ ժողովածուն: Այստեղ ընդգրկված փաստական հարուստ տվյալները հնարավորություն է տալիս առավել համակողմանի դիտարկել Ֆրանսիայի արտաքին քաղաքականության դրսևորումները Մերձավոր Արևելքում, և այս համատեքստում անգլո-ֆրանսիական մրցակցության շարժառիթները և հեռանկարները: Դետաքրքիր մեկնաբանություններ կան նաև Ա. Թոյնբիի⁴⁰ և Գ. Լյուիսի⁴¹ աշխատություններում: Ինչպես շատ հեղինակներ, նրանք ևս հանդես են գալիս անգլիական արտաքին քաղաքականության պաշտպանության դիրքերից, միաժամանակ քննադատական խոսք ուղղելով դաշնակից Ֆրանսիային մեղադրելով նրան քեմալականների հետ անջատ բանակցությունների և «դավաճանության» մեջ:

9. Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են ինը ենթագլուխների, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու զրականության ցանկից: Ներածությունում ներկայացված են ատենախոսության նպատակները և խնդիրները, բարձրացված հարցերի արդիականությունն ու կարևորությունը, հիմնավորվում է աշխատանքի գործնական նշանակությունը, տրվում օգտագործված աղբյուրների ու զրականության համառոտ տեսությունը:

³⁰ Hakkı J., *Jeni Osmanlı Borçlari Tarihi*, Istanbul, 1964.

³¹ Baskın O., *Türk dış Politikasi*, cilt, 1, Istanbul, 2001.

³² Tevfik B., *Atatürk Anadolu'da 1919-1921*, cilt 1, Ankara, 1959.

³³ Şerafettin T., *Türk devrim Tarihi*: kitap 2: Ankara, 1992.

³⁴ Kazım Ö., *Atatürkün TBMM Açık ve Gizli oturumlarındaki Konusmaları*, cilt 2, Ankara, 1990.

³⁵ Esmer A., *Siyasi tarih, /1919-1939/*, Ankara, 1953.

³⁶ Aydemir Ş., *İkinci Adam*, Istanbul, 1993.

³⁷ Arcayürek. C., *Şeytan Üçgeninde Türkiye*, Ankara, 1987.

³⁸ Esmer A., *Siyasi Tarih*, Istanbul, 1944, Ziya Ş., *Atatürk. Büyük Şefin, Hususi- Askeri-Siyasi Hayati*, Istanbul. 1938. *Türkiye Tarihi*, □ardaş *Türkiye 1908-1980*, cilt 4, Istanbul, 2005. Gengiz Ö., *Türkiyenin siyasi intihari yeni-osmanli tuzagl*, Istanbul, 2008. Yılmaz Ö., *Türkiye Tarihi*, cilt 12, Hayat yayinleri, 1963.

³⁹ Documents on British Foreign Policy 1919-1939, First series, vol. 4. London, 1952.

⁴⁰ Toynbee A., *Survey of international Affairs*, 1936, Vol 1, London, 1937, 1938,

⁴¹ Lewis G., *Turkey*, London, 1955.

Ատենախոսության առաջին գլուխը՝ «ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ /1920-1923թթ../» իր հերթին բաժանված է երեք ենթագլուխների: «Ֆրանսիայի շահերը հետպատերազմյան թուրքիայում» ենթագլխում ներկայացնում է Առաջին աշխարհամարտի ավարտից հետո իրադարձությունների զարգացումը, հաղթող տերությունների օրոքսօրե փոփոխվող քաղաքական դիրքորոշումների պատճառները և հետևանքները, լուսաբանվում են նաև, թե ի՞նչպես և ի՞նչ մեթոդներով էր Ֆրանսիան պատրաստվում պաշտպանել Թուրքիայում ունեցած իր ֆինանսատնտեսական շահերը: Ինչու՞ Ֆրանսիան գնաց քենալականների հետ առանձին դիվանագիտական կապերի հաստատմանը:

Երկրորդ և երրորդ ենթագլուխներում «Ֆրանս-քենալական դիվանագիտական կապերը 1919-1921թթ: Անկարայի պայմանագիրը» և «Ֆրանս-թուրքական հակասությունները Լոզանի համաժողովում» հանգամանակից ներկայացվում են օսմանյան ժառանգության շուրջ անգլո-ֆրանսիական հակասությունների սրման պատճառները, դիտարկվում Ֆրանսիայի, իր «սրտակից դաշնակից» Անգլիայից առանձին, քենալականների հետ դիվանագիտական կապերի հաստատման շարժառիթները, ընթացքն ու հեռանկարները: Լուսաբանվում է Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի գործողությունների տրամաբանությունը, նաև դրա աղետալի հետևանքները կիլիկիահայության համար: Վեր է հանվում Լոզանի համաժողովում թուրքական հարցում Ֆրանսիայի հավակնությունները, դրանց իրականացման հեռանկարները և դաշնակից Անգլիայից նրա կախվածության պատճառները:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «ՖՐԱՆՍ - ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1924-1935 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ» ներկայացվում են «Լոզանի ժառանգության» չլուծված կնճռոտ խնդիրների՝ Օսմանյան պարտքի, թուրք-սիրիական սահմանագծման, Մոսուլի պատկանելության հարցերը, որոնք հետագայում լուրջ հակասությունների պատճառ հանդիսացան:

Առաջին ենթագլխում «Թուրք-սիրիական սահմանային վեճերը և Ֆրանսիայի դիրքորոշումը» մանրամասն անդրադարձ է կատարվում թուրք-սիրիական սահմանային վեճերի պատմությանը, այս հարցում Ֆրանսիայի և Թուրքիայի հարաբերություններում առկա տարածայնություններին: Քննության է առնվում Մոսուլի խնդրի շուրջ անգլո-թուրքական հակամարտության ազդեցությունն ու հետևանքները ֆրանս-թուրքական բանակցային գործընթացի վրա:

«Օսմանյան պարտքի կարգավորման հիմնախնդիրը և Ֆրանսիան» ենթագլխում լուսաբանվում է Լոզանում լուծում չստացած և երկար տարիներ Թուրքիայի ու Եվրոպական երկրների, հատկապես Ֆրանսիայի հետ բնականոն հարաբերությունների հաստատման խոչընդոտ հանդիսացող Օսմանյան պարտքի հիմնախնդրի կանոնակարգման և լուծման գործընթացը: Հետազոտվում են Օսմանյան պետական պարտքի վճարման կանոնակարգի, միջոցների, վերահսկման մեխանիզմների ձևավորման խնդիրները:

Երրորդ ենթագլխում՝ «Միջազգային լարվածության խորացումը և ֆրանս-թուրքական հարաբերությունները 1924-1935թթ» դիտարկվում է 1930-ական թվականների սկզբներից Եվրոպայում իրադրության բարդացման պայմաններում ֆրանս-թուրքական հարաբերությունների

գարգացման հեռանկարները: Ընդգծվում է թե ինչու՞ միջազգային իրադրության լարվածության մեծացմանը զուգընթաց Ֆրանսիայի և Անգլիայի դիվանագիտական հաշվարկներում թուրքիան աստիճանաբար վերածվում է ցանկալի դաշնակցի: Ներկայացվում են նաև նշյալ ժամանակաշրջանում թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:

Աշխատանքի երրորդ գլխում՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ԴԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՖՐԱՆՍ-ԹՈՒՐՔԱՎԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ» մանրամասն ներկայացվում է Ալեքսանդրետի սանջաքի կարգավիճակը սիրիական պետության կազմում 1918-1937 թթ., շարադրվում են միջազգային դիվանագիտական և քաղաքական պայքարի այն փուլերը, որոնք առաջացան Ալեքսանդրետի խնդրի շուրջ՝ սկսած Ազգերի լիգայում սանջաքի մասին որոշում ընդունելուց մինչև «Հաթայի պետության» հռչակումը և Ալեքսանդրետի սանջաքի միացումը թուրքիային:

Առաջին ենթագլխում «Ալեքսանդրետի սանջաքի հարցի վերաբացումը» դիտարկվում է Ալեքսանդրետի սանջաքի հատուկ վարչակարգի էությունն ու առանձնահատկությունները, հիմնավորվում է, որ Ալեքսանդրետի սանջաքը սիրիական տարածք է և 1936թ ֆրանս-սիրիական պայմանագրով այն մտնելու էր Սիրիայի կազմի մեջ: Ժխտվում է այն տեսակետը, որ սանջաքը իբրև ամբողջովին թուրքերով բնակեցված մարզ հանդիսանում է թուրքական ազգային տարածքի մաս: Ներկայացվում է նաև թե ի՞նչ հիմնավորումներով և ճանապարհներով թուրքական կառավարությունը կարողացավ «հետևողականորեն» հասունացնել Ալեքսանդրետի հարցը, հանել այն միջազգային դիվանագիտության թատերաբեմ և ապօրինի ձևով միացնել իրեն:

Երկրորդ և երրորդ գլուխներում «Ալեքսանդրետ-Անտիոքի» խնդիրը Ազգերի լիգայում և Ֆրանսիայի դերը» և «Հաթայի պետության» հռչակումը և Ֆրանսիայի դիրքորոշումը, մանրամասն լուսաբանվում է թե Ալեքսանդրետի սանջաքի շուրջ ֆրանս-թուրքական հակամարտությունը որքանով էր կապված Եվրոպական խոշոր երկրների (Անգլիա, Գերմանիա, Իտալիա) հետ, որոնք էլ իրենց հնարավորությունների սահմաններում ազդեցին սանջաքի վերաբերյալ լուծման ընթացքի և արդյունքի վրա: Ներկայացվում է թե ինչպես Ազգերի լիգայի օրակարգ բերելով սանջաքի կարգավիճակի հարցը պաշտոնական Անկարան իրեն բնորոշ վարքագծով, բազմաբնույթ միջոցներով քաղաքական լարված մթնոլորտ ստեղծեց սանջաքում և շրջանցելով Ազգերի Լիգայի ընդունած որոշումները կարողացավ աստիճանաբար հարցի կարգավորումը տանել իրեն ցանկալի ճանապարհով: Ուսումնասիրվում է նաև, թե քաղաքական ին՞չ դիրքորոշում որդեգրեց տեղի հայությունը, ընդգծվում որ Սանջաքի համար ճակատագրական այդ օրերին ինչպես Սիրիայի, այնպես էլ Ալեքսանդրետի ողջ հայությունը, արաբ ժողովրդի կողքին հանդես եկավ ի պաշտպանություն Ալեքսանդրետի սանջաքի:

Այս գլուխները լույս են սփռում այն հարցին, թե ինչպիսի՞ արտաքին հանգամանքների ճնշման տակ Ֆրանսիան աստիճանաբար նահանջեց իր ամուր դիրքերից, տեղի տվեց Հանրապետական թուրքիայի պահանջներին: Ընդգծվում է, որ Ալեքսանդրետի սանջաքի հարցի հայտնի «կարգավորման» գործում կարևոր դերակատարություն է ունեցել Անգլիան, ով հարցի

կարգավորման հաջողական փուլերում մշտապես գործել է ի նպաստ թուրքիայի: Բրիտանական դիվանագիտության հաշվարկներում Ֆրանսիան կարևոր դերակատարություն ուներ, քանզի անգլիական շահերի անվտանգության համակարգում Միջերկարծույան ավազանում առանց Ֆրանսիայի մասնակցության թուրք-անգլիական դաշիքը չէր կարող արդյունավետ լինել: Հետևաբար, Անգլիան ամեն ինչ արեց էր ֆրանս-թուրքական հարաբերությունների կարգավորման ճանապարհին:

Հիմնավորվում է նաև թե ի՞նչու Ալեքսանդրեոսի հարցին տրված միակողմանի «լուծումը» չի ընդունվել սանջաքի ազգաբնակչության ճնշող մեծամասնության և հարցի բուն իրավատեր՝ սիրիական ժողովրդի ու պետության կողմից և առ այսօր արդիական է Սիրիայի Արաբական հանրապետության և սիրիացիների համար:

ԵԶՐԱԿԱՍՏՈՒԹՅՈՒՆ մեջ ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, ատենախոսը եզրակացնում է.

1. Առաջին աշխարհամարտի ավարտը միջազգային հարաբերություններում սկիզբ դրեց ուժերի վերադասավորման և հետպատերազմյան աշխարհի քաղաքական քարտեզի վերածննդի դժվարին մի գործընթացի, որտեղ հաղթող պետություններից յուրաքանչյուրի հնարավորությունները որոշվեցին ուժերի ռեալ հարաբերակցությամբ: Պատկերավոր ասած «լռեցին պատերազմի թնդանոթները, որպեսզի խոսեն միջազգային դիվանագետները և բաժանեն ավարը»: Այս առումով ամենաշահեկան վիճակում էր հայտնվել Մեծ Բրիտանիան, որն իսկապես բավական հաստատուն և ազդեցիկ դիրքեր էր գրավել թե՛ Եվրոպայում, թե՛ Մերձավորարևելյան տարածաշրջանում, և թե՛ Աֆրիկայում: Իսկ Բրիտանական քաղաքականության ռազմավարները իրենց հմուտ գործողությունների շնորհիվ կարողացան անգլիական արտաքին քաղաքական ուղեծիր ներքաշել ինչպես ֆրանսիական, այնպես էլ թուրքական դիվանագիտությանը և շատ հաճախ ծառայեցնել իրենց քաղաքական նպատակներին:

2. Դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի շահերը խաչվեցին հատկապես Մերձավոր Արևելքում, որտեղ և Օսմանյան կայսրության նախկին տարածքների բաժանման շուրջ խորը հակասությունները երկար ժամանակ հնարավորություն չէին տալիս կողմերին ընդհանուր հայտարարի գալ: Դաշնակիցների քաղաքական հաշվարկներն ու նպատակները այս պարագայում բավական տարբեր էին:

Ֆրանսիան, ելնելով թուրքիայում ունեցած իր տնտեսական, ֆինանսական, քաղաքական շահերից, ձգտեց ամեն գնով ապահովել թուրքիայի տարածքային ամբողջականությունը և գնաց քեմալականների հետ առանձին դիվանագիտական կապերի հաստատմանը:

Անգլիան, որին ձեռնտու էր նախկին Օսմանյան կայսրության տարածքների վերածնունդը, հաշվի առնելով իր հաստատուն դիրքերը այդ տարածաշրջանում, ստիպեց Ֆրանսիային էական զիջումներ կատարել բրիտանական դիվանագիտության օգտին:

3. Վերլուծելով Լոզանի համաժողովում Ֆրանսիայի որդեգրած դիրքորոշումը, կարող ենք փաստել, որ դաշնակից Անգլիայից Ֆրանսիայի կախվածությունը՝ վերջինիս հարկադրեց համաժողովի ընթացքում գրավել ավելի մեղմ դիրք՝ գնալ բրիտանական քաղաքականությանը համընթաց և

պաշտպանել Անգլիայի համար գլխավոր խնդիրներ հանդիսացող Նեղուցների և Մոսուլի հարցերը:

Ինչ վերաբերում է 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրին, ապա մեր համոզմամբ, այն եկավ հաստատագրելու նոր իրողությունները, Թուրքիայի շուրջ առաջացած նոր հավասարակշռությունը: Թուրքիան Արևմուտքի ռազմավարական նախատեսումներում զբաղեցրեց իր պատվավոր տեղը, որպես պահակի՝ Նեղուցներում, և որպես պատնեշի՝ Բուլշևիկյան Ռուսաստանի դեպի Մերձավոր Արևելք ծավալման առաջ: Ակնառու դարձավ ևս մեկ բան՝ Լոզանում ֆրանսիական դիվանագիտությունը չկարողացավ պահպանել իր իրավունքներն ու տնտեսական արտոնությունները Թուրքիայում, ամրապնդել իր ֆինանսատնտեսական դիրքերը և առաջնության հասնել այդ տարածաշրջանում:

4. Հետպատերազմյան շրջանում Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղությունները դիտարկելով, կարող ենք շեշտել, որ հատկապես քեմալական շարժման սկզբում գերակա ուղղություն էր համարվում սերտ համագործակցությունը Խորհրդային Ռուսաստանի հետ: Արդեն 1923թ-ից Թուրքիայի միակ բարեկամը հիշյալ խաղում Խորհրդային միությունն էր, քանի որ Մ. Քեմալը խստորեն կողմ էր Խորհրդային Միության հետ բարեկամական հարաբերությունների պահպանմանը: Թեև Թուրքիային հաջողվեց օգնություն ստանալ, սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ դա երկար շարունակվել չէր կարող և վաղ թե ուշ նրանց առջև դրվեցին որոշակի նախապայմաններ: Կարծում ենք, որ այս հանգամանքը ևս նշանակություն ունեցավ Թուրքիայի կողմից՝ Խորհրդային Միության և Արևմուտքի միջև վարած, այսպես կոչված հավասարակշռության քաղաքականություն ձևավորման գործում: Սակայն իրադրությունը փոխվեց, երբ 1930-ական թթ. սկզբներին, (1932 թ. հուլիսի 18-ին) Թուրքիան դարձավ Ազգերի լիգայի անդամ և ապահովեց իր մերձեցումը գլխավոր դերակատարներ Անգլիայի և Ֆրանսիայի հետ:

5. Դաշնակիցների անհաշվեմկատ քաղաքականության արդյունքում Մ. Քեմալը և նրա գլխավորած կառավարությունը կարողացան ամրագրել մի շարք կարևորագույն ձեռքբերումներ: Դրա վկայությունը եղավ Անտանտի երկրորդ խոշոր տերություն Ֆրանսիայի հետ Անկարայի պայմանագրի ստորագրումը, որն էլ լուրջ ճեղքվածք առաջացրեց մինչ այդ թուրքական ազգային իշխանությունների դեմ համատեղ հանդես եկող Անտանտի ծամբարում: Ավելին, վարպետորեն խուսանավելու, դիվանագիտությունը և ուժը գործնականում հմտորեն հավասարակշռելու, ներդաշնակցային հակասությունները տեղին օգտագործելու շնորհիվ թուրքական դիվանագիտությունը Լոզանից հետո ավելի ամրապնդեց իր միջազգային դիրքերը: Բազմաբնույթ պայմանագրեր ստորագրեց թե՛ հարևան, թե՛ եվրոպական խոշոր պետությունների հետ, ակտիվորեն ներգրավվեց միջազգային ասպարեզում ծավալվող իրադարձությունների մեջ:

6. Ընդհանրացնելով Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի վարած քաղաքականության հետևանքները, գալիս ենք այն եզրահանգման, որ զուտ շահադիտական խնդիրներով առաջնորդվող Ֆրանսիայի դեկավար շրջանները, ապացուցեցին որ, հեշտությամբ կարող են «մոռանալ հայերին տրված բոլոր հանդիսավոր խոստումները»: Պատրաստ են գոհաբերելու Կիլիկիան էլ, նրա հայությունն էլ, եթե քեմալական կառավարությունը թեկուզ

նվազագույն չափով ճանաչել իրենց շահերը: Արդյունքում, կիլիկիահայությունը՝ խաբված իր «մեծ դաշնակցից», հազարավոր նոր զոհեր տալով, այս անգամ անվերադարձ լքեց հայրենի կիլիկիան: Անհրաժեշտ է նշել, որ իր դաշնակցին ոչնչով չզիջեց նաև Անգլիան: Լոզանում նրանք «ըստ արժանվույն հատուցեցին» Օսմանյան թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնություններին, առաջին հերթին իրենց փոքր «դաշնակցին»՝ Հայաստանին: Լոզանի խորհրդաժողովն նախ Հայկական հարցը «Ազգային օջախի» գաղափարից հասցվեց թուրքիայի որևէ անկյունում հայերի կենտրոնացման մտքին, հետո՝ տերությունների հավաքական կանքով տապանաքար դրվեց Սևրի դաշնագրի վրա:

7. Անփոփելով հետլոզանյան շրջանի թուրք-ֆրանսիական հարաբերությունների զարգացումը, կարող ենք ընդհանրացնել, որ Լոզանի համաժողովում լուծում չստացած Օսմանյան պարտքի, թուրք-սիրիական սահմանագծման, Մոսուլի վիլայեթի կարևոր հարցերը երկար ժամանակ խոչընդոտում էին թուրքիայի և եվրոպական մեծ պետությունների միջև բնականոն հարաբերությունների զարգացման գործընթացին: Թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա մեծապես ազդեց Մերձավոր Արևելքում հետպատերազմյան աշխարհի ամենախոշոր հակամարտություններից մեկի՝ Մոսուլի շուրջ անգլո-թուրքական պայքարը: Այս հարցում բրիտանական կողմին հաջողվեց ստանալ ֆրանսիական դիվանագիտության աջակցությունը, իսկ թուրքիան հարկադրված էր գնալ զիջման՝ հաշվի առնելով Ֆրանսիայի և Անգլիայի շահերի ժամանակավոր համատեղումը:

8. 1930-ական թթ. սկզբներից, անգլո-ֆրանս-թուրքական հարաբերությունները՝ պայմանավորված մի շարք կարևոր գործոններով նոր հարթություն տեղափոխվեցին: Անգլիայի և Ֆրանսիայի միջև առկա բարեկամության նախադրյալները, որոնք թելադրված էին երկրորդ համաշխարհային պատերազմի վտանգով, մի կողմից թուրքիայի միջազգային դիրքերի ամրապնդմանը և հեղինակության նշանակալի մեծացմանը, մյուս կողմից էլ եվրոպական թատերաբեմում օրըստօրե բարդացող իրադրության պայմաններում, եվրոպական առաջատար պետությունների կողմից ձեռնարկած դաշնակիցների «փնտրտուքով»:

Սակայն, երբ եվրոպայում զգացվեց պատերազմի իրական վտանգ, Անգլիան և Ֆրանսիան շարունակեցին վարել թողվության և «չմիջամտելու» քաղաքականություն՝ հուսալով խուսափել Գերմանիայի հետ հարաբերությունների բարդացումից:

9. Ինչ վերաբերում է ֆրանս-թուրքական հարաբերություններին, ապա 1930-ական թթ. առաջին կեսին, իսկապես նկատվեց որոշակի առաջընթաց: Ավելին, թուրքական կառավարությունը Ֆրանսիային առաջարկեց ստորագրել փոխօգնության պայմանագիր: Սակայն, 1936 թ. երկրորդ կեսին, թուրքիայի կողմից միջազգային դիվանագիտության թատերաբեմ «նետված» Ալեքսանդրետի սանջաքի հարցը ոչ միայն ստվեր գցեց փոխադարձ համագործակցության և հարաբերությունների բարելավման գործընթացի վրա, այլև սանջաքը դարձավ այն կռվախնձորը, որի շուրջ բախվեցին թուրքիայի և Ֆրանսիայի շահերը:

10. Ալեքսանդրետի սանջաքի շուրջ երեք տարի շարունակվող դիվանագիտական լարված պայքարում թուրքական դիվանագիտությանը հաջողվեց «քայլ առ քայլ» հարկադրել Ֆրանսիային չափավորել իր անհաշտ դիրքորոշումը: Ծավալված ֆրանս-թուրքական թեժ պայքարի ողջ

ընթացքում թուրքական դիվանագիտությունը կարողացավ ճարպկորեն խուսանավել մի կողմից անգլո-ֆրանսիական խմբավորման, մյուս կողմից առանցքի երկրների միջև օրըստօրե խորացող հակասությունների հորձանուտում և սանջաքի խնդիրը լուծել իր համար նախընտրելի ձևով:

Ալեքսանդրետի շուրջ վեճի վերջնական կարգավորումը իրավական հիմքերից տեղափոխելով քաղաքական հարթություն, ֆրանսիական կառավարությունը, Սիրիայի ժողովրդի ու պետության կամքին հակառակ խախտեց Սիրիայի տարածքային ամբողջականությունը և Ալեքսանդրետը գիջեց թուրքերին:

Թուրք-սիրիական հարաբերություններում Ալեքսանդրետի սանջաքի հարցը, ի թիվս մի շարք հարցերի, կարևորագույն տեղ է զբաղեցնում, հետևաբար, հակված ենք կարծելու, որ Թուրքիայի և Սիրիայի միջև առկա տարածքային խնդիրների շուրջ տարածայնությունները, ինչպես նաև արտաքին հնարավոր ազդակները կարող են լրջորեն կասկածի տակ դնել երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման հեռանկարները և չի կարելի բացառել, որ Սիրիայի Արաբական Հանրապետությունը, պատեհ առիթի դեպքում միջազգային դիվանագիտության առջև կբարձրացնի Ալեքսանդրետի սանջաքը /իսլամներուն/ իրեն վերադարձնելու հարցը:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱՎԿԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐՎԿՈՒՄՆԵՐԸ

1. Մարտիրոսյան Ա. Ռ., Ալեքսանդրետի սանջաքի բռնագավթումը Թուրքիայի կողմից և Ֆրանսիան, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Հասարակական գիտություններ, հ. 3, Վանաձոր, 2007, էջ 45-49:
2. Մարտիրոսյան Ա. Ռ., Անկարայի պայմանագիրը, Խ. Արևիկյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, հ. (1) 7, Երևան, 2008, էջ 100-106:
3. Մարտիրոսյան Ա. Ռ., Ֆրանս-թուրքական հարաբերությունները հետլուզանյան շրջանում 1924-1935թթ. ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի «Օրինետալիա» գիտական հոդվածների ժողովածու, պրակ 9, Երևան, 2009, էջ 46-60:
4. Մարտիրոսյան Ա. Ռ., Անգլիական գործոնը ֆրանս-թուրքական հարաբերություններում 1920-1930-ական թթ. Խ. Արևիկյանի ծննդյան 200-ամյակին նվիրված Համալսարանի 54-րդ նստաշրջանի նյութերի ժողովածու, պրակ 1, Երևան, 2010, էջ 337-340:

МАРТИРОСЯН АРМАН РАФИКОВИЧ

ФРАНКО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В 1920-1939 ГГ

**Диссертация на соискания ученой степени кандидата
исторических наук по специальности
07. 00.02 “ВСЕМИРНАЯ ИСТОРИЯ”**

**Защита состоится 24-ог ноября 2011г., в 13.00 часов на заседании
специализированного совета 006, действующего при Института Востоковедения
НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4г.**

Резюме

Освещение франко-турецких отношений в контексте современных реалий имеет важное политическое и практическое значение, поскольку на Ближнем Востоке и, особенно в Турции, сконцентрированы основы современных многочисленных тенденций и событий вплоть до 20-30-ых годов 20-ого века.

Диссертация имеет также политическое значение, поскольку сегодня в контексте процесса ведения переговоров Турция-Европа, Франция имеет большую роль в деле формирования внешней политики Европейского сообщества.

Проблемы и цели диссертации

Основной целью диссертации было всестороннее исследование франко-турецких отношений 1920-1939гг., выявление основных мотивов утверждения двусторонних отношений, перспектив и этапов развития, а также анализ отражения

международного послевоенного развития на франко-турецкие отношения. Исходя из вышеуказанного, в диссертации исследуются следующие вопросы:

- Представление стратегии Франции на Ближнем Востоке и в Киликии.
- Обсуждение развития франко-турецких политических связей с различных аспектов после Первой мировой войны.
- Освещение франко-турецких экономических отношений в рассматриваемый период времени с выявлением различных экономических вопросов.
- Выявление причин уступчивой французской политики и последствия заинтересованности сверхдержав в точке столкновения, в которой оказалась территория Ближнего востока.
- Исследование процесса регулирования вопроса Османского долга и выявление позиции французской стороны в данном вопросе.
- Освещение позиции заинтересованных властей СССР, Италии, Германии Англии и Франции по вопросам Александреттского санджака, который был составляющей частью Сирии, поскольку для России данная территория как в прошлом, так и сейчас является причиной различных споров.
- Раскрытие причин данного конфликта в контексте стратегических целей и задач с одной стороны Франции и Англии, а с другой стороны – Германии и Италии.
- Анализ процесса обсуждения и итогов решения вопроса Александреттского санджака в Лиге Наций и рассмотрение политических расчетов Турции на данном этапе.
- Рассмотрение позиций восточных стран по отношению к Турции накануне Второй мировой войны.
- Обсуждение важности роли Турции с точки зрения утверждения мира и силовых отношений на данной территории.

Актуальность темы диссертационного исследования обусловлена тем, что тема, которая была нами рассмотрена, ранее не подвергалась специальной разработке и полноценному изучению в нашей действительности, хотя были исследованы и опубликованы связанные с данным вопросом научные труды и статьи, где были освещены связанные с темой отдельные вопросы.

Новизна данной научной работы заключена в том, что в диссертационном исследовании проанализирован и освещен с исторической точки зрения весь комплекс франко-турецких отношений на различных временных этапах. Новизна научных данных диссертационной работы показана в тех отделах, где говорится о франко-турецкой дипломатической борьбе после Лозаннской конференции, особенно в связи с предъявлением требований и предложений Турции по вопросам уточнения границ мандатных территорий Франции Сирия и Турция.

Новизной диссертационного исследования является также отдел, связанный с вопросом Османского долга. Правда, вопрос обсуждался на Лозаннской конференции и был частично отображен во франко-турецком конфликте, однако основной вопрос в отечественной истории не был полностью изучен.

Основой методического изучения являются историко-сравнительный подход и анализ источников основных вопросов. Широко были использованы методы сопоставления различных подходов, связанных с обсуждением разных точек зрения и вопросов. Многочисленные современные вопросы и мнения были представлены по-новому, в политическом анализе.

Работа состоит из введения, трех глав, послесловия и списка использованных источников и литературы.

В введении представлены цели и вопросы диссертации, актуальность и важность поднятых вопросов, представлено краткое содержание источников и литературы.

В первой главе – “Новый этап франко-турецких отношений (1920-1939гг.)”, представлены развитие событий после окончания первой мировой войны, причины и последствия ежедневно меняющейся политики и переменчивой позиции властей-победителей. Также в первой главе освещается, как и какими методами Франция была готова защитить финансово-экономические права Турции. В этой главе представлены факты, раскрывающие причины англо-французских протворечий вокруг Османского наследия, рассматриваются предпосылки, побудившие Францию утвердить дипломатические отношения с кемалистами отдельно от своего “сердечного союзника” – Англии. Освещаются логические действия Франции по отношению к вопросу Киликии, а также плачевные последствия для Киликийских армян.

Во второй главе описываются франко-турецкие отношения 1920-1939гг. и нерешенные мелкие вопросы “Наследия Лозанн”, Османского долга, турецко-сирийской разграниченности, вопросы, связанные с принадлежностью Мосула, которые в дальнейшем становятся серьезной причиной для противоречий. Здесь подробно показаны отражения турецко-сирийских споров, а также рассмотрены влияние и последствия англо-турецкого конфликта на франко-турецкий переговорный процесс вокруг проблемы Мосула. Также освещен нерешенный вопрос в Лозанне, связанный с Османским долгом, который годами препятствовал построению естественных отношений между Турцией и Европой, особенно с Францией. Рассматривается перспектива развития франко-турецких отношений в связи с усложнением событий в Европе в начале 1930-ых годов.

В последней третьей главе - “Проблема Александреттского санджака и франко-турецкие отношения накануне второй мировой”, подробно описывается статус Александреттского санджака в составе Сирии 1918-1937гг., сущность и особенности администрации санджака, представлены те этапы международных политических и дипломатической борьбы, которые появились вокруг проблем Александретта, начиная с принятия решения в Национальной Лиге, до провозглашения “Государства Ата” и присоединения Александреттского санджака к Турции. В этой главе раскрыт ответ на вопрос, под каким внешним давлением Франция постепенно отступила от своих позиций, и уступила место требованиям Турецкой Республики и насколько обусловлен франко-турецкий конфликт вокруг Александреттского санджака с крупными странами Европы

(Англия, Германия, Италия), которые по мере своих возможностей воздействовали на процесс и результат решения вопроса Александреттского санджака.

Здесь также обосновывается, почему односторонне решенный вопрос Александретта был принят основным населением санджака и владельцем вопроса, т. е. сирийским народом и государством, и почему до сегодняшних дней этот вопрос актуален для Сирийской Арабской Республики и ее населения.

В послесловии подытожены основные результаты диссертации, сделаны выводы по поводу ухудшения франко-турецких отношений в данный период времени.

ARMAN R. MARTIROSYAN

FRANCO-TURKISH RELATIONS IN 1920-1939

**The Dissertation is submitted for pursuing
the Scientific Degree of the Doctor of History
in the Field of “WORLD HISTORY” 07.00.02**

**The defense of the dissertation will take place at 13: 00 on November 24, 2011 at
the Session of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of
NAS RA. Address: 0019, Yerevan. av., Marshal Baghramyan, 24/4**

The elucidation of Franco-Turkish relations in the context of current developments has an important political and practical sense, as in the Middle East and especially in Turkey many contemporary trends and the basis of the events deepens up to the 20th and 30th years of the 20th century. The dissertation is of political significance, as even nowadays France plays a crucial role in the formation of European foreign policy in the context of the negotiation process between Turkey and European Union. The main purpose of the dissertation was to study Franco-Turkish relations between 1920-1939, to reveal the main motivations of settling bilateral relations, stages of development and perspectives, as well as to analyze the influence of international developments of post-war world on Franco-Turkish relations. Based on these purposes, the following issues have been touched upon in the dissertation;

- To introduce the strategy of France in the Middle East and Cilicia.
- To discuss the development of Franco-Turkish political relations after the World War I in the viewpoint of various aspects.
- To highlight the main aspects of Franco-Turkish economic relations in the specified period of time, revealing the existing problems in various fields of economy.
- Show the reasons and consequences of French compliant policy ever adopted in the Middle East, which appeared at the center of the collision of interests of great powers.
- Investigate the process of the settlement of the issue of Ottoman debt and the stance of France in the mentioned matter.
- To elucidate the positions of France, England, Germany, Italy, USSR regarding their interests in Alexandrette's Sanjak, which is a part of Syria, as the latter has always been a subject of debates and a battle field for the above mentioned states (Russia came to replace the former USSR).
- To reveal the role of the mentioned issue in the context of strategic goals and objectives of France and England in one hand, and of Germany and Italy on the other hand.
- To analyze the discussion process and results of Alexandrette's Sanjak issue in the League of Nations, as well as Turkey's political intentions in the mentioned phase.
- To examine the logic of the positions of Western countries towards Turkey on the eve of the World War II.
- Analyze the importance of Turkey's role in the region from the viewpoints of establishing peace and correlation of the power.

Previously the subject of the dissertation has not undergone a full and systematized study in our reality with all its substance and questions, though the issue has been investigated

and many scientific papers and articles have been published covering separate topic related to specific problems.

The scientific novelty of the work is the analysis and the historical elucidation of the whole complex of Franco-Turkish relations in different chronological stages. There are novelties in the sections of the dissertation, where it is spoken about Franco-Turkish strategic struggle after Lausanne conference, and, particularly, regarding the requirements and proposals put forward by Turkey during the specifications of borders between Turkey and Syria, which is a mandate territory of France. Another novelty is the section about the issue of Ottoman debt. Of course, once a reference was partially made to the issue, i.e. the negotiations held at Lausanne conference and Franco-Turkish conflict, still this problem did not become a subject of complete study in domestic historiography. The methodological bases of the study are the historical-comparative approach and the analysis of the sources of mentioned issues. Various viewpoints and the method of comparing the standpoints towards the settlement of problems have been widely used here. Series of statements and opinions brought forward during the flow of time have been presented in a new way on the background of political analysis.

The work consists of an introduction, three chapters, conclusion and the sources and the list of literature used.

The introduction presents the goals and objectives of the dissertation, the importance and the relevance of raised issues, the brief presentation of used sources and literature.

The first chapter, the new stage of the relations between France and Turkey (1920-1923), presents the development of the events after the World War I, the reasons and consequences of the political stances of winning states, being changed day by day. Special importance is attached to the ways and methods France used for protecting its financial interests in Turkey.

In this chapter, the reasons for Anglo-French conflict around the Ottoman heritage are presented, a detailed reference is made to the motives, process and perspectives of France's efforts on establishing strategic relations with Kemal Turks, separate from England - the true ally of France. The work also elucidates the logic of the actions of France and the tragic consequences of those actions for Armenians of Cilicia.

In the second chapter titled "French-Turkish relations in 1920-1939" the unresolved minor issues of Lausanne Heritage are presented among which are the Ottoman debt, determination of Turkish-Syrian boundary, appliance of Mosul, which further became a subjects of serious controversies. The detailed reference was made to the history of the disputes over the Turkish-Syrian border, as well as the impact and consequences of Anglo-Turkish debates over the Mosul issue on Franco-Turkish negotiation process. And in this matter the process of French-Turkish talks, the impact and implications around the English-Turkish conflict. This chapter also gives an interpretation to the regulation and settlement of the issue of Ottoman debt, which did not find any solution in Lausanne. This problem used to hamper the establishment of stable relations between Turkey and European countries, and, particularly, with France. Another part of this chapter refers to the prospects of French-Turkish relations in the condition of aggravation of the situation in Europe at the beginning of 1930s.

In the last third chapter, "The issue of Alexandrette's Sanjak and Franco-Turkish relations on the eve of the World War II", there was made a detailed presentation of the status of Alexandrette's Sanjak in Syrian state in 1918-1937, the essence and peculiarities of the regime of Sanjak. This chapter contains a thorough description of the stages of international-strategic and political struggle, which rose round Alexandrette's Sanjak starting from the

resolution adopted in the League of Nations up to the proclamation of Hatay State and the annexation of Alexandrette's Sanjak to Turkey. The chapter also brings into light the external circumstances which made France gradually stay back from its stiff positions, and yielded to demands of Republican Turkey and also gives explanation to the matter of how tight was the Franco-Turkish dispute around Alexandrette's Sanjak bound to the great European countries (England, Germany, Italy) which used to make an influence of the settlement process and result of Sanjak conflict. Special attention is attracted in this chapter to the stance taken by local Armenian society. In this chapter clear arguments are brought on the reason why the unilateral solution given to the issue of Alexandrette's Sanjak was not accepted by both the majority of Sanjak's population, and the real owner of the question – the Syrian State and people, and till nowadays the problem remains actual for the Arabic Republic of Syria and Syrians.

The conclusion gives the summary of main results of the dissertation; conclusions are made on both the reasons and the consequences of the development and deterioration of Franco-Turkish relations in the specified period of time.